Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2024 թվականին քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովման վերաբերյալ

Ազատազրկված անձանց 2024 թվականին տրամադրվել է 15,261 կարճատև տեսակցություն, որից միայն 3-ն են եղել լրացուցիչ կարճատև տեսակցություն, և տրամադրվել են «Աբովյան» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում: Ըստ քրեակատարողական հիմնարկների պատկերը հետևյալն է.

- «Արմավիր» ՔԿՀ՝ 5245
- «Նուբարաշեն»՝ 2298
- «Վարդաշեն»՝ 1543
- «Արթիկ»՝ 1374
- «Վանաձոր»՝ 1230
- «Սևան»՝ 1053
- «Դատապարտյալների հիվանդանոց»՝ 837
- «Աբովյան»՝ 711
- «Գորիս»՝ 640
- «Երևան-Կենտրոն»՝ 330

2024 թվականին տրամադրվել է 2,162 երկարատև տեսակցություն, որն ըստ քրեակատարողական հիմնարկների ունի հետևյալ վիճակագրական պատկերը.

- «Արմավիր»՝ 794
- «Նուբարաշեն»՝ 365
- «Սևան»՝ 292
- «Արթիկ»՝ 177
- «Վանաձոր»՝ 145
- «Վարդաշեն»՝ 132
- «Աբովյան»՝ 92
- «Գորիս»՝ 66
- «Դատապարտյալների հիվանդանոց»՝ 59
- «Երևան-Կենտրոն»՝ 40

2022 թվականի հուլիսի 22-ին ուժի մեջ մտած Քրեակատարողական օրենսգրքով արտաքին աշխարհի հետ ազատազրկված անձանց կապը պահպանելու և ամրապնդելու նպատակով մի շարք կարգավորումներ են նախատեսվել: Հետևաբար հարցում ենք կատարել Քրեակատարողական ծառայությանը՝ վիճակագրական տվյալների համադրմամբ պարզելու համար, թե նշված կարգավորումները գործնականում որքանով են կյանքի կոչվել: Այսպես.

Քրեակատարողական օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող, ինչպես նաև տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար կալանավորվածներին պահելու վայրեր թողնված դատապարտյալներին կարող է քրեակատարողական հիմնարկների սահմաններից դուրս թույլատրվել կարճատև մեկնում՝ մինչև 7 օր ժամկետով՝ բացառիկ հանգամանքների դեպքում՝ մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, արտակարգ իրավիճակ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին: Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ նշված կարգավորման շրջանակներում 2022 թվականի հուլիսի 1-ից 2024 թվականի նոյեմբերի 24-ը ներառյալ «Աբովյան», «Գորիս» և «Դատապարտյալների

հիվանդանոց» ՔԿՀ-ներում պատիժ կրող որևէ դատապարտյալի կարճատև մեկնում չի տրամադրվել: Քրեակատարողական մյուս հիմնարկներում վիճակագրությունը հետևյալն է.

- «Արթիկ» ՔԿՀ-ում պատիժ կրող 10 դատապարտյալի տրամադրվել է կարճատև մեկնում: Նրանցից 1-ն առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված է եղել 10 տարուց ավել ժամկետով ազատազրկման և պատիժ է կրել բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում: Երկու անձ դատապարտված են եղել ցմահ ազատազրկման: Նրանցից 1-ը պատիժ է կրել միջին անվտանգային գոտու խիստ, մյուսը՝ միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում:
- «Արմավիր» ՔԿՀ-ում պատիժ կրող 16 դատապարտյալի տրամադրվել է կարճատև մեկնում: Հինգը դատապարտված են եղել առանձնապես ծանր հանցագործության համար, 10 տարուց ավել ժամկետով, ընդ որում, 2-ը պատիժ են կրել բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում, 3-ը՝ միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում: Երեքը դատապարտված են եղել ցմահ ազատազրկման, որոնք պատիժ են կրել համապատասխանաբար բարձր անվտանգային գոտու մեղմ, միջին անվտանգային գոտու խիստ և միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում:
- «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում կարճատև մեկնում է տրամադրվել առանձնապես ծանր հանցագործության համար 10 տարուց ավել ժամկետով ազատազրկված, բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող 1 անձի:
- «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կարճատև մեկնում է տրամադրվել 15 դատապարտյալի: Նրանցից 4-ը պատիժ են կրել բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում և դատապարտված են ցմահ ազատազրկման: 1-ը նույնպես դատապարտված է եղել ցմահ ազատազրկման և պատիժ է կրել միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում:
- «Սևան» ՔԿՀ-ում կարճատև մեկնում է տրամադրվել 19 դատապարտյալի: Նրանցից որևէ մեկը դատապարտված չի եղել առանձնապես ծանր հանցագործության համար:
- «Վանաձոր» ՔԿՀ-ում կարճատև մեկնում է տրամադրվել 10 դատապարտյալի: Երեքն առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված են եղել 10 տարուց ավել ժամկետով, որոնցից 2-ը պատիժ են կրել բարձր անվտանգային գոտու մեղմ, իսկ 1-ը՝ միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում:
- «Վարդաշեն» ՔԿՀ-ում կարճատև մեկնում է տրամադրվել 8 դատապարտյալի: Նրանցից 1-ն առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված է եղել 10 տարուց ավել ժամկետով և պատիժ է կրել բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում, իսկ 1-ը դատապարտված է եղել է եղել ցմահ ազատազրկման և պատիժ է կրել միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում:

Քրեակատարողական օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայր տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար թողնված դատապարտյալներին կարող է քրեակատարողական հիմնարկների սահմաններից դուրս թույլատրվել կարճատև մեկնում՝ մինչև 7 օր ժամկետով՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխային համապատասխան հաստատությունում կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով: Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ Քրեակատարողական օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո, այս հիմքով որևէ դատապարտյալ կարճատև մեկնումից չի օգտվել:

Քրեակատարողական օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ ցածր անվտանգային գոտում պատիժ կրող դատապարտյալին, ինչպես նաև ազատվելուց հետո կենցաղային, աշխատանքի և սոցիալական այլ հարցեր նախապես կարգավորելու համար կարող է թույլատրվել երկարատև մեկնում մինչև 30 օր ժամկետով՝ սոցիալական վերականգնման նպատակով: Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ Քրեակատարողական օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո, այս հիմքով երկարատև մեկնումից օգտվել

են միայն «Աբովյան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում պատիժ կրող դատապարտյալները: Տրամադրվել է հապատատասխանաբար 9 և 268 երկարատև մեկնում:

Քրեակատարողական օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ քրեակատարողական հիմնարկից դուրս անչափահաս երեխաներ ունեցող դատապարտյալը տարին 1 անգամ, երեխաներին տեսակցելու նպատակով, ունի մինչև 10 օր ժամկետով կարճատև մեկնման իրավունք, եթե տեսակցելու ցանկություն է հայտնել երեխան, և դա չի հակասում նրա լավագույն շահին: Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ Քրեակատարողական օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո այս հնարավորությունից օգտվել է միայն «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պատիժ կրող 1 դատապարտյալ:

Ինչ վերաբերում է երեխայի՝ տեսակցելու ցանկություն հայտնելու գործընթացին, նաև այն հարցին, թե ում կողմից և ինչպես է որոշվում, թե կարճատև մեկնման տրամադրումն ինչպես պետք է հակասի երեխայի լավագույն շահին, Քրեակատարողական ծառայությունից պարզաբանել են, որ երեխային տեսակցելու ցանկություն հայտնած դատապարտյալի կողմից դիմում ներկայացնելու գործընթացը իրականացվում է ընդհանուր կարգով՝ քրեակատարողական հիմնարկի պետին հասցեագրվող դիմումների սահմանված ընթացակարգերով, իսկ երեխայի լավագույն շահին կարճատև մեկնման հակասումը որոշելու իրավական ամրագրումներ և սահմանված ընթացակարգեր այս պահին առկա չեն:

Քրեակատարողական օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պահվող դատապարտյալին թույլատրվում է տարվա ընթացքում ունենալ առնվազն 1՝ մինչև 5 օր տևողությամբ, երկարատև տեսակցություն՝ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով: Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ Քրեակատարողական օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պահվող որևէ դատապարտյալ այս հիմքով երկարատև տեսակցությունից չի օգտվել:

Այսպիսով, թեև արտաքին աշխարհի հետ կապի պահպանման համար օրենսդրական մակարդակում լայն հնարավորություններ են նախատեսվել, գործնականում դատապարտյալները չեն օգտվում դրանցից: Հետևաբար կարծում ենք, որ Արդարադատության նախարարության և Քրեակատարողական ծառայության կողմից պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեն պարզելու համար, թե Քրեակատարողական օրենսգրքի՝ վերը թվարկված հոդվածներով նախատեսված կարգով երկարատև տեսակցություններից, կարճատև և երկարատև մեկնումներից օգտվելու համար քանի՞ դատապարտյալ է դիմում ներկայացրել, և ի՞նչ հիմքերով են դրանք մերժվել: Միևնույն ժամանակ պետք է քայլեր ձեռնարկվեն այդ կարգավորումները կյանքի կոչելու նպատակով անհրաժեշտ մեխանիզմների մշակման և գործարկման ուղղությամբ:

Այդ կարգավորումների գործնական կիրարկման խոչընդոտները պարզելը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ պայմանական վաղաժամկետ ազատման նոր հայեցակարգում արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը գնահատելու նոր չափանիշներ և գնահատման սկզբունքներ են նախատեսվել: Օրինակ, արտաքին աշխարհի հետ կապը պահպանելու համար նախատեսված է 5 միավոր: Այն դեպքում, երբ կապը չի պահպանվել ոչ դատապարտյալի մեղքով, նախատեսված է 3 միավոր, իսկ այդ կապը չպահպանելու դեպքում հանվում է 5 միավոր: Մեզ մտահոգում է այն, որ վերը թվարկված հոդվածներով նախատեսված երկարատև տեսակցությունների, կարճատև կամ երկարատև տեսակցությունների համար ոչ բոլոր դատապարտյալները կարող են ստանալ հայեցակագրով նախատեսված 5 միավորը, քանի որ չկան բավարար նախադրյալներ այդ կարգավորումների գործնական կիրարկման համար: